25 հոգի, և դասատու տիրացու մահ-
տեսի Սարգիս Մաղաքեան։ Ձորս
դպրոցին մէջ ընդամէնը ուսանողաց
թիւն է 194 հոգի։

Տիւլիսու դպրատան աշակերտք.

Ուսուցարան կարդացողք . . .	4
Նարեկ	7
Տաճկերէն Աստուածաշունչ . .	1
Թարգմանութիւն ընող . . .	2
Կոտակարան կարդացողք . . .	5
Յամագիրք	3
Սաղմոս	11
Ընթերցարան	1
Ձեգերէն	7
Տերական	28
	68

ՆՈՒԻՐԱՏՈՒՔ

Տատեան Վսեմաշուք Ռաքէլ էֆէնտին շնորհեց սուրբ Աթոռոյս Թանգարանին,

Մէկ կտոր քարացեալ անդիյա։

Վեց պղտիկ անդիյա պատուական քարեր։

Մէկ դանակ սավրի ըսուած։

Տատեան Վսեմաշուք Ներսէս պէկը նուիրեց սուրբ Աթոռոյս Թանգարանին,

Անգլիոյ Թագաւորական պալատին ամեն կողմէն առնուած տեսքերը, զատ զատ փորագիր տպուած։

Ձորս կտոր մեծագիր գրեանք զանազան նկարներու։

Մէկ մանրադիտակ (microscope) հանդերձ իւր պարագաներովը։

Պ. Տատեան Վսեմաշուք Սիմոն պէկը շնորհեց՝

Մէկ ելեքտրական գործիք մը մեծ, որոյ ապակիին տրամագիծն է 82 հարիւրամեդր։

Մէկ փոքր առձեռն՝ նոյն ելեքտրական գործիքէն։

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՐՑՄՈՒՆՔ ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆՔ

(Տես թիւ 9 երես 157)։

ՅԳ. Հարցման ը-ծ-մը՝ լեալ է խնձորն 320։ ՅԴ. Հարցման ը-ծ-մը՝ էր գինին փաս 126։ ՅԵ. Հարցման ը-ծ-մը՝ լեալ էր գինոյ յիրն 616 դահեկան։ ՅԶ. Հարցման ը-ծ-մը՝ հաւասարիայ գաղափոսն յաւրս 70։

Հարցումն ՅԵ.

Նաւ մի երթայր լի ցորենով, և կէտ մի զհետ մտեալ նաւին, նաւորդքն երկեան և ընկեցին նմա կեր զհասարակ (կէս մասը) ցորենոյն, և յերկու աւուրն ընկեցին զհինգ մասն մնացելոյն. յերրորդումն՝ զուրթն, ի չորրորդումն՝ զեւթն, ապա ի նաւահանգիստն հասին, և մնաց ՌՄ (7200)։ Արդ, գիտեա թէ ամենայն քանի՞ լիեալ էր։

Հարցումն ՅԸ.

Ապաղարէ մի էր իմ, խանդարեցի և այլ սպաս արարի, զերեք մասն մեսուր մի արարի, և զչորրորդ մասն այլ մեսուր արարի, և զհինգ մասն երկու բաժակս արարի. և զմեցն՝ երկու սկուտեղս արարի, և երկու հարիւր և տասն դրամէ սկաւառակ մի արարի։ Արդ, գիտեա թէ ընդ ամենայն քանի՞ էր լիեալ ապաղարէն։

Հարցումն ՅԹ.

Այր մի յերիս եկեղեցիս եմուտ, և խնդրեաց յԱստուծոյ յառաջնումն՝ եթէ տուր ինձ որչափ ունիմս, եւ տամ քեզ քսան և հինգ դահեկան։ Նոյնպէս և յերկրորդումն ետ զքսան և զհինգն, և յերրորդումն. և առիւր ոչինչ մնաց։ Արդ, գիտեա թէ յառաջն քանի՞ ունէր։

digitised by A.R.A.R.@

Հարց-ին Ի.

Ներսէհի Կամսարականի Շիրակայ եւ Արշարունեաց տեառն բուն կանգնէր առ ստորով լերինն՝ որում Արտին կոչեն. և ի գիշերի միում մըտին երամակք ցռուց բաղումք. եւ ոչ լիեալ ատակ որսորդացն, ընթացեալք պատմեցին ամենայն ի գեաւղն Թալին։ Իւ նորա իւրովն եկեալ հանդերձ եղբայրաւքն և աղատաւքն, և մտեալ կոտորէին զերէսն՝, և եղեն կալեալք ի Թակարդի հասարակ երէցոյն։ Իւ եղեն սպանեալքն նետիւ չորս մասն, և զմատաղերէն ողջ կալան, որ եղեւ երկոտասան մասն. և եղեն մեռեալքն ի նիզակէ երեքհարիւր վաթսուն երէ։ Արդ, գիտեա թէ ընդ ամենայն քանի՛ լիեալ էին։

Հարց-ին ԻԱ.

Ներսէհ Կամսարական որդի Արշաւիրի, անուանակից և նախնի այսմ Ներսէհի, ի յաղթել պատերազմացն Խահզճացն, առնու գերի սաստիկ յոյժ. և հասեալ ի դուռն արքունի, ընծայեցուցանէ Թագաւորին Պարսից զհասարակ գերւոյն։ Իւ Թուեալ զհասարակն եւս ընծայէ որդւոյ արքայի զեւԹն մասն։ Իւ հրաժարեալ ի նոցանէ՝ գառնայ յաշխարհն իւր. և եկեալ ի տուն Պարիկպետի, յոյժ մեծարի ի նմանէ, ոչ որպէս ըզ նախարար, այլ որպէս զմի ոք ի Թագաւորայ. և սա տայ նմա զուԹ մասն գերւոյն։ Իւ եկեալ առ սպայապետն, զոր և Խորավարն կոչեն, և առաւել եւս ի նմանէ՝ մայնեալ՝ տայ նմա զԺԴ մասն գերւոյն։ Իւ եւս յառաջ եկեալ հասանէ յաշխարհ իւր, և ընդ առաջ լինի նմա եղբայր իւր կրտսեր Հրահատ, և տայ նմա զԺԴ մասն գերւոյն։ Իւ եւս յառաջ եկեալ՝ ընդ առաջ լինին նմա ազատքն Հայոց. և տայ նոցա զինն մասն գերւոյն։ Իւ եկեալ ի Վաղարշապատ տայ ի սուրբ եկեղեցիսն ԶԺԴ մասն գերւոյ։ Իւ եկեալ Սահակ աւագ եղբայր իւր. տայ նմա զքսան մասն գերւոյն. և իւր մնաց հինգհարիւր յիսուն անձն։ Արդ, գիտեա թէ ընդ ամենայն քանի՛ է լիեալ։

Հարց-ին ԻԲ.

Փարաւոն արքայ եգիպտացւոց պատուէր զոր ծննդեան իւրոյ. եւ սովորութի՛ էր նորա յաւուրն յայնմ տալ տասն նախարարացն ըստ տասնեկի պատուոյն հարիւր կարաս գինի խնկովք կազմեալ։ Արդ, բաժանեալ՝ զայդ ըստ պատուոյն հարիւր տասնեկին։

Հարց-ին ԻԳ.

Շտեմարան մի էր իմ, յորում կայր գարի կայԹ երկերիւր. մկներ մտին և զամենայն գարին կերան։ Իս մուկն մի կալայ ի նոցանէ, և պատուհասեցի. նա խոստովանեաց և ասէ. յիս ութսուն հատ եհաս։ Արդ, գիտեա թէ ընդ ամենայն քանի հատ լեալ էր յշտեմարանին, և կամ քանի՛ մկունք ոչք կերանն։

Հարց-ին ԻԴ.

Երեք աւազանք էին ի քաղաքին Աթենացւոց միաչափք, և երեք աղուգայք կային յաւազանն։ Մի աղուգայն, քանզի յորդէր, ի ժամ մի ընոյր զաւազանն. երկրորդն՝ նուազ քան զնա, յերկուս ժամն ընոյր. երեքն՝ առաւել նուազ, յերեք ժամն ընոյր։ Արդ, գիտեա թէ մինչ ի միասին խառնին ագուգայքն, ի քանի՛ երորդ մասն ժամու ընուն զաւազանն(1)։

Վ Ի՛ՐՔ։

(1) Առանց լուծումն եկող թուով։

digitised by A.R.A.R.@